



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Handwritten text: *Handwritten text*

Supp

899.962.1

2-15

1

5992

- 6 NOV 2011

899,362.1 Ա. ՉԱՁԲԻՔԻ

12-17 (Ա. Մ. ՄՈՉԻՈՒԲԱՐԻՉԷ)

Ք Ա Թ Ի

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ЭТНОЛОГИИ
Академии Наук
СССР

ՀԱՏԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾԲ

Վրացեէկնից քարզմ. Չ. Կ.

Հրատարակուիւմ Ա. Մալխասեանցի.

Տպ. Ա. Մալխասեանցի, Աղեւանդրապոլում.
1904

POS 19 JUN 2013

74635

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ

Дозволено цензурою, 19 Марта 1904 г. г. Тифлисъ.



60020-06

Յ Ա Ք Ի

(ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ)

186* թ. Քաշվեթի լուսավառուած եկեղեցում, կէս-գիշերին, լսուեց բոլոր քրիստոնեաների սրտին բերկրալի ձայնը:

— Քրիստոս յարեալ. ասաց բաճանան: Քրիստոս յարեալ. կրկնեցին մեծ թէ փոքր, և այս խոսքերին հետեւեց ալեկոծուած բազմութեան որոտալի պատասխանը—

— Օրհնեալ է յարութիւնն քրիստոսի:

Յետոյ սկսուեց հաւկիթների չխշխկոցը, առամների վրա նրանց ամբողջութիւնը փորձելը:

Բոլորի գէմքերը ինչոր բաւականութիւն և անասելի ուրախութիւն էր արտայայտում, ամենքն էլ տօնական զգեստներով էին վարդարուած, նրանք այնպէս էին համբուրում և միմեանց շնորհակաւորում, որ կարծես թէ միմեանց դէմ նախանձ ու թշնամութիւն երբէք չէին ունեցել: Բոլորի գէմքերը

բերկրանքով էին փայլում, բոլորեքեան ուրախ էին
և իրանց բաղդաւոր էին զգում:

Իսկ եկեղեցու դռան մօտ շարուել էին տե-
սակ-տեսակ այլանդակուած խեղճ աղքատներ, պա-
տառոտուն շորերով. նրանք անհամբեր հայացքով
և պարզած ձեռքերով բաղդաւորներէց շարտած
փշրանքներին էին սպասում. նրանց, ոչ տանը,
ոչ ազգականների մօտ և ոչ մի ուրիշ տեղ որևէ
ուրախութիւն չէր սպասուում. մի կտոր հաց, իրանց
թշուառ գոյութիւնը պահպանելու համար, ահա
նրանց ամբողջ ցանկութիւնը, նրանց նպատակը:
Նրանք այստեղ էլ կոււում էին միմեանց հետ տեղի
համար. ամէն մէկը աշխատում էր դռան մօտ լի-
նիլ. աւելի շատ փող ստանալու համար:

Բախդաւորները եկեղեցուց դուրս էին տանում գա-
նազան տեսակ և զանազան գոյնի նշխած Չատ-
կահացեր, խորոված և եփած գառներ, կարմիր
ներկած հակիթներ, և այս բոլորը միասին մի
անուշահոտութիւն էին տարածել օդում, որից ա-
խորժակ էր գրգռւում: Այնտեղ եղող աղքատները
տկար ժամանակ պաս պահելուց լետոյ՝ ազահ աչքե-
րով և դողդոջուն ձեռները պարզած դէպի բաղդա-
ւորները, ասում էին մաշուած ձայնով.

— Ողորմութիւն արէք ի սէր Քրիստոսի յարու-
թեան: Ողորմացէք սղքատիս ի սէր Աստծու:
Ողորմացէք մանրիկ որբերին:

Աղքատներից քիչ հեռու, պատի տակ պառկել
էր մի կոյր ծերունի հիւանդ և մաշուած. նա
ոտի վրա չէր կարողանում կանգնել, նրա դժգոյն
դէմքը, անկանոն շնչառութիւնը ցոյց էին տալիս,
որ այժմ էլ խեղճը սաստիկ տաքութիւն ունէր և
անհանգիստ էր:

Փչում էր սառն քամին, և այդ պատճառով
ծերունին աշխատում էր ամուր փաթաթուել իր
պատառոտած վերարկուի մէջ, որը իր ծառայու-
թիւնը այլևս չէր կարողանում ցոյց տալ և տեղ
տեղ երևում էր նրա տկլոր մարմինը:

Քանի որ նա թոյլ էր և անզօր, մնացած աղ-
քատները նրան յետ էին ձգել: Սրա փոքրիկ դուստ-
րը՝ «Փաթին» աղէկտուր ձայնով ողորմութիւն էր
խնդրում, բայց շատ չնչին բան էր ընկնում ձեռը.
որովհետև ընկերները առաջ չէին թողնում, հայ-
հոյանքներով և հրելով յետ էին քցում. բայց նա
կրկին աշխատում էր մի կերպ մէկի կամ միւսի
կռնատակով անցնել և եկեղեցուց դուրս եկող բազ-
մութեան առաջ կանգնում և սրտածմլիկ ձայնով
աղերսում էր:

— Աղջիկ պարոն. ողորմութիւն արէք, խղճա-
ցէք հիւանդ ծերունուն, և ձեռքով ցոյց էր տա-
լիս մահամերձ հօրը: Սակայն բախդաւոր մարդիկ
ուշադրութիւն չէին դարձնում սրա աղաչանքին:
Բազմութիւնը հեռանում էր ուրախ տրամա.

գրուածեան տակ, ուրախ-ուրախ շնորհաւորելով մի-մեանց, ամենքն էլ շտապում էին գէպի իրանց տուն: Հեռացան նաև այստեղ եղող աղքատները: Այնտեղ մնաց միայնակ խեղճ Փաթին և նրա մահամերձ հայրը, որը այնպէս ոյժից ընկած էր, որ տեղից չէր կարողանում շարժուել:

Փաթին դիտեց իր ժողովածները, որ մի քանի կոպէկներ, հաւկիթներ և մի կտոր Չատկական հաց էր: Յետոյ կամաց մօտեցաւ հօրը:

— Լայրի՛կ, հայրի՛կ, կանչեց նա հիւանդին, սա-կայն պատասխան չստացաւ. չնայած, որ տաքու-թիւնից չորացած շրթունքները շարժոււմ էին և աշխատում էին ձայն հանել:

— Լայրի՛կ, վախեցած ձայնով կրկնեց Փաթին և չոքեց նրա կողքին. Լայրը յանկարծ ձեռքը կուրծ-քին սեղմեց, քիչ վեր բարձրացաւ և դողդոջուն ձայնով հագիւ արտասանեց.

— Օգնեցէք, մեռնում եմ . . . որդի . . . որ . . . որդի . . . որ . . . նա այլևս չկարողա-ցաւ խօսքը վերջացնել, խռիւտաց և անշնչացած ընկաւ եկեղեցու պատի մօտ . . .

II.

Մի քանի տարի յետոյ՝ տիկ. X-ի խանութի պատուհանի մօտ յաճախ երևում էր մի կար անող աղջիկ, որի գեղեցկու թիւնը շատ երիտասարդների

հիացմունք էր պատճառում, որոնք բեխերը ոլո-րած չար նպատակով շարունակ անց ու դարձ էին անում այդ խանութի առաջ:

Այս կար անող աղջիկը Փաթին էր, որ ինչ որ անակնկալ գիպուածով ընկել էր այս խանութը և ինչպէս ընդունակ աղջիկ, շատ շուտ էր սովո-րել կար ու ձևը. նրա գեղեցկութիւնը և մաքրա-սիրութիւնը, որ այնպէս գնահատելի է այս տեսակ խանութներում, Փաթիին անհրաժեշտ անդամ էին դարձնում նոյն խանութում և լաւ էլ վարձատրոււմ էր:

Փաթին գոհ էր իր վիճակից. նա լաւ ոռճիկ էր ստանում և հետը լաւ էին վարւում: Նրա օրերը ուրախ էին անցնում: Միայն նա չէր կարողանում մոռանալ այն երեկոյն, երբ իր հայրը այնպէս խզճալի և թշուառ դրութեան մէջ, անտէր և առանց մխիթարութեան հոգին աւանդեց, և այդ րոպէները մաշում էին նրա հոգին, ծանր քարի պէս ծանրանում նրա սրտի վրայ:

Այս տեսակ տխուր մտածմունքների ժամանակ Փաթին իրաւունք էր վերցնում մեծաւորից և դուրս էր գնում յատկապէս նրա համար, որ ի յիշատակ իր հօր մի քանի աբասի բաժանէր աղքատներին:

Մի գեղեցիկ հագնուած երիտասարդ, որ ամեն օր այս փողոցով անց ու դարձ էր անում, ամեն տեսակ ճիգ ու ջանք էր թափում Փաթիի

Հետ ծանօթանալու. Հենց որ Փաթին խանութից դուրս էր գալիս, նա անմիջապէս Հետեւում էր նրան և չէր Հեռանում, մինչև որ Փաթին կրկին խանութ չէր մտնում:

Այսպէս անցնում էին օրեր օրերի յետևից, սակայն այս երիտասարդը ոչ մի կերպ չէր կարողանում ծանօթանալ Փաթիի Հետ, որովհետև վերջինս այնպէս էր պահում իրան, որ անծանօթ մարդիկ դժուար թէ Համարձակուէին դէմ առ դէմ խօսել:

Մի երեկոյ ինչ որ բախդաւոր օր էր երիտասարդի Համար: Փաթին ըստ սովորականի դուրս եկաւ զբօսնելու և գնաց այգիներից մինչը, որտեղ մուգիկա էր նուազում: Փաթին մի քանի քայլ չարած, տեսաւ մեր անծանօթ երիտասարդին, որը, կարծես, գետնի երեսից բուսաւ և սկսեց նրան Հետեւել: Փաթին յետ նայեց և տհաճութեամբ ասաց ինքն իրան. «էլի այն երիտասարդը: Ի՞նչ է ուզում արդեօք ինձանից», և այգին մտաւ: Այդ օրը Փաթին շատ տխուր էր երևում. ինչ որ վշտեր պաշարել էին նրա սիրտը: Նա ուզում էր մի ընդհատ մտածումները, չմտածել այլևս իր դարտերի մասին. բայց չէր լինում, սև մտքերը նրան չէին թողնում: Նա տխուր էր և կարծես թէ մի բանի մասին էր մտածում, բայց թէ ինչու մասին էր մտածում, ինչն էր նրա սիրտը լցրել

զառն մտածումներով, այդ ինքն էլ չգիտէր:

Նա այս դրութեան մէջ էր, երբ մի պառաւկին տեսաւ, որ մի փոքրիկ տղայի առաջնորդութեամբ, ցնցոտիների մէջ գունատուած դէմքով, նա ողորմութիւն էր խնդրում, բայց երբեմն մի զբօսնողն էր զգուանքով Հեռացնում, երբեմն միւսը:

Զարմանալի, տարօրինակ հակապարկեր էր ներկայացնում այս տեսարանը: Մի կողմում զբօսնողները շքեղ հագուստներ, հպարտ դէմքերով, ճոխ արդ ու զարդով, իսկ միւս կողմում կոյր պառաւը իր փոքրիկ տղայի Հետ, որ մի կտոր հացի Համար հալումաջ է եպած, ընկճուած, նրանց ցնցոտիները տգեղացնում էին նրանց մարմինը:

Երեսան պառաւ մօրը Հասցրեց սանդուխքներին, նստեցրեց. նրա առջև փռեց թաշկինակը, իսկ ինքը գնաց մօտիկ նստող անծանօթ մարդկանց մօտ, որոնք գինի, Հաց, ցոցխալ ձուկն և զանազան ուտելիքներ էին դուրս բերել և ի ցոյց մարդկանց քէֆ էին անում:

Այլահպերդի—իսխշիօլիին Հետեւում էր «Արբածներ երանի մեզ» երգը, աղմուկ և ծաղրալի կատակներ և հահոցներ: Երեսան մօտեցաւ նրանց և ողորմութիւն խնդրեց. նրանք վաճակեցին Հայհոյելով: Նա քիչ Հեռացաւ, բայց ջրակալած աչքերը չուել էր ուտելիքների վրայ:

Բաւականին երկար նայեց երեսան թուքը

կուլ տալով. ապա շարժեց չորացած շրթուքները, սրբեց արցունքներով լի աչքերը, բայց հարբածները նրան չէին նայում, նրա համար ժամանակ չունէին, նրանք խրպոտ ձայնով կանչում էին. «հարբածներ երանի մեզ», և իրաւ երանի նրանց:

Երեխան էլ չը կարողացաւ դիմանալ, նա ծածուկ մօտեցաւ մի կտոր հաց թռցրեց ու փախաւ, բայց քէֆ անողները այս նկատելով վեր թռան, բռնեցին նրան և սկսեցին անողորմաբար ծեծել:

Վրա հասաւ ոստիկանը, որը ուզում էր երեխային բռնել և տանել, բայց երեխան չեր թողնում և ասում էր, «թողէք, թողէք, այստեղ կոյր մայր ունիմ, մենակ ինչպէս թողնեմ»: Բայց նրան ոչ ոք չէր լսում. նա գող էր և պէտք է պատժուէր:

Անց ու դարձ անողները ասումէին, «գնդ են բռնել, գող»: Ուրիշները աւելացնում էին. «դրանց ահից մարդ չի կարողանում անցնել». և էլի ուրիշները ասում էին «Попался? Хорошенко его, хорошенко»:

Հէնց այդ ժամանակ վրա վազեց նրա կոյր մայրը, որ կովի նման բառանչում էր: Նա կոյր էր, չեր կարողանում իր որդուն տեսնել և այս բանը է մօր սիրտն աւելի ևս ճմլում էր որդու փորձանքից, նա լալիս էր, աղաչում էր, խելքը կորցրած մռնչում էր, որդու անունը տալիս, դողդոջուն ձեռքերով իր մարմինն ու արիւնն էր փնտրում

բայց չէր կարողանում գտնել:

Մարդիկ ամեն տեղ մարդիկ են—նրանք ծիծաղում էին պառաւի գործողութիւնների վրայ, իսկ պառաւի սրտում հազար ու մի դարտեր կային:

Փաթին, որ վկայ էր այս տեսարանին, այլևս չկարողացաւ դիմանալ, մօտեցաւ ոստիկանին և սկսեց աղաչել, որ ազատեն երեխային:

Ոստիկանը նայեց կասկածանքով, զննեց նրան և ասաց:

— Հեռացի՛ր, դու քո բանին կայ:

Այս միջոցին ով որ անցաւ. և իբր թէ պատահամբ ձեռքը Փաթիի վզով գցեց: Նա մի րոպէում զայրացած մի կողմ հրեց նրան և լետ քաշուեց:

Մրա վրա թէ ոստիկանը և թէ ժողովուրդը սկսեցին ծիծաղել. իսկ Փաթին չէր իմանում ինչ անէր ամօթից:

Այդ ժամանակ մօտ եկաւ մեր անձանօթ երիտասարդը և բարկացաւ ոստիկանի վրա, որ կանգնել էր նրա առաջ, հրամայեց երեխային բաց թողնել, իսկ այն լրբին բռնել, որը ձեռքը Փաթիի վզովն էր բցել:

— Դու այս մարդուն ոստիկանապետի մօտ կը տանես և կասես, որ իշխանը ուղարկեց: Նա դիտամբ շեշտեց իշխան բառն.

— Հասկանում եմ, Զերդ պայծառափայլութիւն, պատասխանեց ոստիկանը և կինտօյին բռնեց:

— Գնա՛, իրիկունը ես ինքս կանցնեմ և կը բացատրեմ այդ զգուելի արարքը:

Ոստիկանը գնաց. իսկ անձանօթը դիմեց Փաթիին, որ չգիտէր թէ ինչ անէր:

— Ես իշխան Մ. . . եմ, թոյլ տուէք, որ ձեզ ուղեկցեմ մինչև ձեր բնակարանը:

— Ծնորհակալ եմ ձեր կրած նեղութեան համար . . . Մինչև բնակարան ուղեկցել հարկաւոր չէ, դուք ինձ միայն մինչև կառքը ուղեկցեցէք:

Այս օրուանից սկսուեց Քաթիի և իշխան Միքայէլի ծանօթութիւնը, որը իր բարոյական պարտքն էր համարում, միշտ Փաթիին հանդիպել, երբ նա զբօսնելու էր դուրս գալիս:

III.

Իշխան Միքայէլը մի վալլչակագմ ու գեղեցիկ դէմքով մի երիտասարդ: Լաւ կարողութիւնը, որ ժառանգել էր իր հօրից, իրաւունք էր տալիս նրան ամեն տեսակ զուարճութիւններով զբաղուելու և Միքայէլն էլ այդ բանից օգտուում էր:

Նա երբ առաջին անգամ տեսաւ Փաթիին, հաւանեց և ուզեց հասարակ ձևով սիրային յարաբերութեան մէջ մտնել ժամանակ անցկացնելու, նպատակով, նա յոյս ունէր, որ մի երկու անգամ. հանդիպելուց յետոյ, կը կարողանար իր նպատակին հասնել, ճանգել գեղեցիկ աղջկան. բայց բանից

գուրս եկաւ, որ ոչ թէ մի երկու անգամ հանդիպելը, այլ և ամիսները բաւական չէին Փաթիի հետ ծանօթանալու, եթէ վերոյիշեալ դէպքը չպատահէր:

Ինչքան դժուարանում էր Փաթիի հետ ծանօթանալը, այնքան նա աւելի ևս բուռն ցանկութեամբ ուզում էր նրան մօտենալ և հետզհետէ այս ցանկութեան ստրուկը դարձաւ:

Այդ դէպքը միջոց տուեց ծանօթանալու. և իշխանը այն օրից սկսած անբաժան Փաթիի հետ էր մասն գալիս, նրա հետ խօսում, զուարճանում:

Վերոյիշեալ դէպքը, որի մէջ երևաց իշխանի հերոսութիւնը, Փաթիի սրտում տպաւորեց նրա դէմքը, որ յաջախ մտածում էր նորա մասին և առիթ էր փնտրում իր սիրածին տեսնելու:

— Դուք չէք կարող երևակայել, թէ Ինչ երջանիկ օր էր ինձ համար այն օրը, երբ ես բախտ ունեցայ ձեզ հետ ծանօթանալու: Ա՛խ Աստուած, ինչպէս երանի էի տալիս այս յոպէներին: Ի՛նչպէս տանջուում էի, շշնջում էր աղջկան, որը յուզուած և հրճուանքով կլանում էր այս քաղցր խօսքերը:

Փաթիին, որ մի աղնիւ զգացմունքներով լի սիրտ ունէր, հաւատում էր նաև ուրիշի զգացմունքների անկեղծութեանը, հաւատում էր Միքայէլի ասած իւրաքանչիւր մի խօսքին:

Մի անգամ Թիֆլիսի ժողովարաններից մէկում դիմակահանդէս էր նշանակուած, և ամբողջ քա-

դաքը պատրաստուում էր այնտեղ ներկայ գտնուելու: Նրանց թուում էին նաև Փաթիի ընկերուհիները, որոնք միևնույն խանութումն էին աշխատում: Փաթին իր օրում դիմակահանդեսում չէր եղած, բայց իր ընկերուհիների անվերջ խօսակցութիւնները դիմակահանդեսների մասին, որտեղ մեծ բազմութիւն էր հաւաքուում դիմակաւորուած, դիտմամբ այլանդակուած դէմքերով, այս ամենը ծիծաղելի էր գտնուում և ամբողջ հոգով ցանկանում էր իր աչքով տեսնել:

— Դու էլ արի մեզ հետ Փաթի, ասաց ընկերհուհիներից մէկը Սուսան անուանով, որ ամենից շատ էր յափշտակուած դիմակահանդեսով:

— Ա՛խ, Սուսան, ես ի՞նչպէս կարող եմ գալ, քանի որ բոլորովին պատրաստ չեմ:

— Այդ ոչինչ . . . թատրոնից կը վերցնենք դոմինո և դիմակ: Ել ուրիշ ոչինչ հարկաւոր չէ:

— Գնանք, գնանք, չորս կողմից շրջապատելով՝ ասացին միւսները և շուտով համոզեցին Փաթիին:

Սուսանը անմիջապէս թատրոն գնաց, ճարեց դոմինո և դիմակ, զուգեցին Փաթիին և գնացին դիմակահանդէս: Առաջին անգամ ներս մտնելու պէս լուսաւորուած դահլիճը, որտեղ հազար ու մի տեսակ լոյսեր էին արձակում ճրագները, փայլուն լատակ, զարդարուած սենեակներ, որտեղ լսուում էին մեզմ վալլսի ձայնը, այս բոլորը զարմանք պատ-

ճառեցին և դիւթեցին Փաթիին: Նա ման էր գալիս, նայում էր, գննում էր, նա ինքնամոռացութեան մէջ չէր նկատում, որ ինքը մենակ էր:

— Դիմակ: Ի՞նչ ես մենակ մնացել: Յանկարծ լսեց Փաթին և դէպի այն կողմը նայեց:

Նրա սիրտը սկսեց դողդողալ, երբ իր աչքի առաջ կանգնած տեսաւ գեղեցիկ հագնուած իշխան Միքայէլին:

— Ուզո՞ւմ ես պարել:

Փաթին առաջուց ուզում էր ծածկուել նրանից, բայց երբ Միքայէլին տեսաւ, յափշտակուած նրանով՝ ամեն ինչ մոռացաւ:

— Այո՛, բարեւելով պատասխանեց Փաթին:

Նրանք մի քանի ատուրս անցան, իսկ յետոյ իշխանն ու Քաթին թեւանց սկսեցին անց ու դարձանել:

Դիմակ: Ես քեզ ճանաչում եմ, ասաց Միքայէլը ժպիտն երեսին:

— Ես էլ ձեզ եմ ճանաչում:

— Ի՞նչու էք դուք ով խօսում:

— Ես ուրիշ կերպ չեմ կարող խօսել, այսպէս եմ սովոր:

— Ինչ բախտաւոր երևոյթի պէտք է վերագրել քո այստեղ լինելը:

— Սուսանը թախանձեց և էլ պոկ չեկաւ ինձանից:

— Աստուած իմ, որքան շնորհակալ պէտք է լի-

նիմ օր, Սուսանից:

Ապա սկսեցին ման գալ. Միքայէլը անվերջ հաճոյախօսութիւններ էր անում, քաղցր շշնջում էր, ինչ որ այնպէս հաճելի էր Փաթիի սրտի համար:

Փաթին իրան այդ միջոցին բախտաւոր էր զգում, նա սիրով մինչի լոյս, առանց ձանձրոյթի կը լսէր Միքայէլին և չէր կշտանայ:

Այս երեկոն Փաթիի համար իր կեանքի առաջին ուրախ երեկոն էր, նա այդ օրը առաջին անգամ զգաց մի մինչ որ անհասկանալի դրութիւն և այս զգացողութիւնը, կարծես նրա մանկութիւնից ի վեր տանջուած սիրտը գուրգուրում ու սփոփում էր:

Փաթին այլևս չէր հարցնում ինքն իրան, թէ ինչ դուրս կգար այստեղից, կամ ինչ էր սպասում իրան:

Կամ թէ ի՞նչ մտածէր: Նա ինքն իրան անչափ երջանիկ էր զգում, նա ինչպէս անփորձ օրիորդ ամբողջապէս իրան սիրող էակին էր նուիրուած:

— Նա իշխան է, իսկ ես մի հասարակ աղքատի աղջիկ. — մտածում էր Փաթին նա երբէք ինձ հետ չի ամուսնանայ, բայց նա ինձ սիրում է, հաւանում է, ինձ համար այս էլ բաւական է, մտածում էր նա և այս մտածմունքով հանգստացած, կրկին անցնում էր իր սիրած էակին. նա ինձ սիրում, ինձ

հաւանում է: Եւ աչքի առաջ պատկերանում էր Միքայէլի հրեշտականման դէմքը, նրա ոգևորուած խօսքերը և մինչ սրտի խորք թափանցող ձայնը ...

IV.

Մի գարնանային երեկոյ, երբ ամբողջ բնութիւնը զարթել էր ձմեռուայ քնից, երբ գետնի կանաչ մախմուրէ գորգերը զարդարուել էին հազար ու մի ծաղիկներով, իշխան Միքայէլը պատահեց փողոցում Փաթիին, որ զբօսնելու էր գնում:

— Բարի երեկոյ, Փաթի, — ասաց Միքայէլը և տխրած դէմքը ձեռը թօթուեց:

— Ի՞նչպէս էք, հարցրեց Փաթին, նկատելով իշխանի տխրութիւնը:

— Շատ վատ . . .

— Ի՞նչ պատահեց, ի՞նչ է, — վախեցած և զգացուած ասաց Փաթին:

— Այն, որ աշխարհը դժոխք է և մարդ չի կարողանում հանգստութիւն գտնել:

Ի՞նչպէս, ինչո՞ւ էք այդպէս ասում:

— Որովհետև դժբախտեմ, կարճ կտրեց Միքայէլը:

— Դժբախտ: Դ՞ուք: Զարմացած բացականչեց Փաթին. Ինչո՞վ էք դժբախտ:

Իշխանը նայեց նրա աչքերին և տխուր պատասխանեց:

— Նրանով, որ դու ինձ չես սիրում:



Н. И. МУТА
РОССИЙСКОЕ ВЕЩАНИЕ
Академия Наук
СССР

Փաթին այս խօսքերից լուզուած՝ մի քանի քալ առաջ անցաւ. մի քանի րոպէ երկուսն էլ լուռ էին:

Նրանք մտան Աղէքսանդրեան այգին: Հիանալի երեկոյ էր: Պայծառ լուսինը վերևից նրանց էր նայում, նստարանները բռնուած էին զբօսնողներով:

— Խնայիր, մի տանջիր! շշնջաց կրկին իշխանը, երբ նրանք մի առանձին ծառուղու հասան և նստեցին նստարանի վրա:

— Վճռիր, այժմ, հէնց այս րոպէին . . . կամ ինչ հետ պէտք է ամուսնանաս կամ թէ չէ . . . ես այլ ևս չեմ կարող ապրիլ:

Փաթին որ այս տեսակ բաղդաւորութիւն իւր օրում չէր կարող երեւակայել, կարծեց՝ թէ լսողութիւնը խաբում է իրան:

— Հասկանո՞ւմ ես, Փաթի, ընտրիր, կամ իմ մահը, կամ ինչ հետ ամուսնանալը:

Համաձայն ես թէ ոչ . . . թէ . . . չես սիրում:

Փաթին հազիւ հասկացաւ թէ իրանից ինչ էին սուզում, նա այնպէս լուզուած էր, որ այլևս չկարողացաւ զսպել և հեկեկալով Միքայէլի գերկն ընկաւ:

Սիրում եմ . . . սիրում եմ . . . միթէ չե՞ս տեսնում, որ սիրում եմ քեզ. շշնջում էր Փաթին,

— Առանց քեզ ես էլ չեմ կարող ապրել . . .

Միքայէլը գրկեց Փաթին բազուկներով, կրծքին սեղմեց և սկսեց համբոյրներ քաղել նրա սիրուն այտերից:

Նա երգում էր, որ առանց նրան մի օր չէր կարող ապրել, որ Փաթին այնպիսի պահանջ էր դարձել նրա համար, ինչպէս օդը շնչելու համար, ինչպէս ջուրը ձկան համար:

Այս անսպասելի բախդաւորութիւնը սիրահարներին այնպիսի մոռացութեան մէջ էր քցել, որ չնայած այգին վաղուց էր դատարկուել զբօսողներից և լուսինն էլ Մթաս—Ծմինգայի գագաթից թեքուել էր, սակայն նրանք դեռ էլի նստած էին և չէին կշտանում միմեանց նայելուց, միմեանց գգուելուց:

V.

Անցան ամարային գիշերները և նրանց հետ էլ Փաթիի քաղցր երազները: Փաթին շուտ նկատեց Միքայէլի սառնութիւնը և այդ բանը շատ վատ ազդեց: Նա անվերջ մտածում էր, տանջւում, չարչարում, բայց ոչ մի կերպ չէր կարողանում վերագարձնել կորցրած երջանկութիւնը:

Փաթին տանջում էր և հառաչում, սակայն ոչ մէկից մխիթարական խօսք չէր լսում: Տանջանքով ու կսկիծով սպասում էր Միքայէլին, բայց ի գուր:

Այսպիսի սպասողական դրութեան մէջ և

ներքին մտատանջութեամբ անցնում էին օրերը. որ ըոպէ առ ըոպէ խլում էին նրանից նրա երեսի գոյնը, հանգստութիւնը և նրա հետ միասին քայլում էր նրա առողջութիւնը: Հանդարտ ու աշխոյժ Քաթին, այժմ կարծես թէ բոլորովին ընկճուել, վախկոտ էր դարձել, չէր կարողանում մարդու երեսի նայել, կարծում էր թէ բոլորը ծաղրում ու նախատում էին:

Այս դրութեան մէջ հասաւ Չատկի գիշերը և Փաթինն անցած օրերի յիշողութիւնները ամբողջ ոյժով տանջում էին նրա սիրտը:

Մենակ նստած էր Փաթին իր սենեակում տխուր ու տրտում և անցած օրերի մասին էր մտածում: Նրա աչքի առաջ պատկերացաւ նախ այն բախդաւորութիւնը որ այնպէս քաղցր ու ախորժելի էր թւում մի քանի ամիս սրանից առաջ, ետոյ յիշեց իր աղքատութիւնը, որբութիւնը, կոյր մօրը, որ Քրիստոսի յարութեան օրը, քրիստոնեաներից մոռացուած քաղցած ու ծարաւ աւանդեց հոգին, յիշեց նրա հետ զանազան դատարաններ թրև տալը, և սրա հետ միասին, ով գիտէ, քանի քանի չարչարանքներ: Բայց երբ նայեց իր այժմեան սղբալի դրութեանը, անցած որբութեան, անտէրութեան հետ համեմատելով, անցած բոլոր տանջանքները, քաջած նեղութիւններից աւելի զարհուրելի թուաց: Նրա սիրտը տակն ու

վրա էր լինում, և դառն արցունքները անվերջ հոսում էին նրա աչքերից:

— Ինչո՞ւ եմ այսպէս մենակ, այսպէս թշուառ, — ասում էր նա և կարծես թէ քիչ հանգստացած, թէ թմրած, ինչ որ սկսում էր նորից սրտում եռալ և կրկին սկսում էր յորդ արցունքներ թափուել:

Վերջը կարծես թուլացած, նուազած, պառկեց բազմօցի վրա, բայց այս գրութիւնը երկար չտևեց — նա յանկարծ վեր թռաւ և բացականչեց:

— Ո՛չ, ո՛չ, նա ինձ չի կարող թողնել, նա պարտական է ինձ տիրութիւն անել:

Այս ասելով՝ թիկնոցը ուսերին ձգեց, շալով փաթատեց գլուխը և դուրս գնաց՝ դիմելով դէպի Սոլսլակի կողմը:

Նա մէկ տան հասաւ, որի դուռը ծառան պատահմամբ բաց էր թողել և այդ պատճառով Փաթին անարգել ուղղակի վեր բարձրացաւ սանդուխտներով: Ներսից լուռ ձայները համոզեցրին, որ տանուտէրը քնած չէր և տանն էր: Քիչ կանգ առաւ Փաթին և դուռը բացեց:

— Փաթի, — զարմացած բացականչեց Միքայէլը: Ինչո՞ւ եկար այստեղ, Քնչ ես ուզում:

— Մի՞թէ հարցնում ես:

— Ես այժմ հիւրերի եմ սպասում, քեզ համար ժամանակ չունիմ: Ա—՛ն. այժմ ժամանակ չունիս հա՛: Մի՞թէ: Այժմ, երբ ամեն

ինչ զոհեցի քեզ, հասկանում ես ամեն ինչ . . .
 ինչ որ թանգ է կնոջ համար, ինչով կինը պար-
 ծենալ կարող է: Այժմ զգուհում ես ինձանից, այժմ
 ես այլևս քեզ համար պետք չեմ, այլևս ժամա-
 նակ չունիս ինձ համար . . . Ուրեմն իմա-
 ցիր, որ ես ինձ համար չեմ եկել . . . գիտեմ
 թէ ում ես սպասում, դու նշանուել ես, ամուս-
 նանում ես . . . Այդ ինձ համար միևնոյնն է
 . . . Ինչ ինձ Աստուծու առաջ կպատասխանես:
 Սակայն ինչ ես ասում քո զաւակի համար, որ
 այս օրերս աշխարհ պիտ' գայ . . . պատասխանիր . . .
 գուցէ նրա համար ևս ժամանակ չունիս
 . . . Ես եկել եմ այստեղ իբրև մայր, որ քեզա-
 նից հաշիւ պահանջեմ . . . Հասկանում ես հա-
 շիւ . . . Ի՛նչ կասես քո ապագայ զաւակի հա-
 մար . . . :—

Հէնց այդ ժամանակ լսուեց դռան զանգակի
 ձայնը: Միքայէլը, որ աներոջն էր սպասում
 շփոթուեց:

— Այժմ գնա՛, ժամանակ չունիմ . . . վաղը,
 վաղը, այժմ խնդրում եմ հեռանաս:

— Չեմ գնայ, ես այստեղից ոտս չեմ փոխի . . .
 Ի՛նչ երգուեցիր, որ կամուսնանաս ինձ հետ, ես
 էլ հաւատացի . . . եթէ որևիցէ մէկը այստեղ
 գտնուելու իրաւունք ունի, ես ամենից աւելի պիտ'
 տի ունենամ . . . Ես քո որդու մայրն եմ!

Այդ միջոցին ներս մտաւ շքանշաններով
 զարդարուած Միքայէլի աները, որը գոռոզաբար աչ-
 քի անցկացրեց աղջկան և հեգնական ժպիտով
 ասաց փեսային:

— Ի՛նչ է, բոման . . . և ուսերով վեր քաշել-
 ով խաղացրեց հաստ փնջերով ուսնոցները:

Ո՛չ, երգուում եմ Աստուծով . . . ինքս էլ
 չգիտեմ, թէ որտեղից և ինչու համար է եկել
 այս կինը . . . սաստիկ շփոթուած ասաց Միքայէլը:

— Աչինչ, ոչինչ, — քաջալերեց նրան աները ես
 էլ իմ երիտասարդութեան ժամանակ շատ . . .

— Ես ձեզ կպատմեմ, կը բացատրեմ, թէ ինչու
 եմ այստեղ, ընդհատեց Փաթին, — Ահա սա խլեց,
 գողացաւ ամեն ինչ . . . հասկանում ես ամեն
 ինչ . . . այսօր կամ վաղը մայր եմ դառնալու
 . . . իսկ այժմ դրժում է թէ երդումը, թէ պա-
 տիւր:

— Ինչո՞վ կարող ես ապացուցանել, որ քո զա-
 ւակը Միքայէլիցն է:

Փաթին չէր սպասում թէ այդ տեսակ ալեւոր
 մարդուց այդպիսի պատասխան պիտի ստանար:

— Ի՛նչպէս . . . ծերունին, որ հայրական խնամք
 պետք է տանէր, մի մարդ, որ շքանշաններով է
 զարդարուած, փորձուած է, յարգուած, այդ տե-
 սակ խօսքեր է ասում: Ել ինչ կարելի է սպասել
 ուրիշներից:

շտապ գերեզմանի մէջ քցեցին և հողով ծածկեցին:
ժողովուրդը, նրանց թուում և իշխան Միքայէլը
էլը իր աներոջ հետ, այդ նոյն օրը կառքով սլա-
նում էր այցելութիւնների «Քրիստոսի Յարութիւ-
նը» շնորհաւորելու համար:

Վ Ե Ր Զ.



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

8392



Յանկուցողները կարողեն դիմել հետեւեալ հաս-
ցեներով

АЛЕКСАНДРОПОЛЬ,
Книжная торговля, А. М. Малхасянца.

Կամ՝ Տիֆլիսի քոլո՛ր գրախանութանոցներին:

<< Ազգային գրադարան



NL0391177

74.635